

1921Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՀՆՏԵՎԱՆՔՆԵՐԸ 1920-1930-ԱՎԱՆ ԹԹ. ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄԱՍՈՒԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ*

Խաչատուր Ստեփանյան

Բանալի բառեր` Փետրվարյան ապստամբություն, սկյուռքահայ մամուլ, «Դրօշակ», «Յառաջ», «Հայրենիք», «Պայքար», «Ճակատամարտ»:

1920թ. դեկտեմբերի 2-ին մի կողմից` ՌԱՖՍՎՀ լիազոր ներկայացուցիչ Լեզրանի և մյուս կողմից` Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչներ Դրոյի և Համբարձում Տերտերյանի միջև ստորագրվեց Երևանի համաձայնագիրը: Այն նախատեսում էր իշխանության խաղաղ անցումը Դաշնակցությունից բոլշևիկներին: Սահմանվում էին իշխանության փոխանցման սկզբունքները, որոնք հիմնականում հետևյալներն էին. Հայաստանում մինչև խորհուրդների համագումարի հրավիրումը իշխանությունը ժամանակավորապես տրվում է ռազմաօկուպացիայի կոմիտեին, որի մեջ մտնում էին 5 կոմունիստներ և 2 ծախս-դաշնակցականներ, Դաշնակցություն և մյուս ոչ բոլշևիկյան սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչները հալածանքի չէին ենթարկվելու կոմունիստական կուսակցության դեմ նախկինում տարած պայքարի համար, խորհրդային Ռուսաստանը երաշխավորում էր խորհրդային Հայաստանի անկախությունը[1]:

Հայաստանի խորհրդայնացումից կարճ ժամանակ անց բոլշևիկյան իշխանությունն ակտիվ պայքար սկսեց այսպես կոչված ժողովրդի թշնամիների դեմ: Դեկտեմբերին ձերբակալվեցին ՀՀ նախկին կառավարության անդամներ: Ավելի ուշ ձերբակալվեցին հայկական բանակի 1.000-ից ավելի սպաներ, որոնց ուղարկեցին Բաքվի և Ռուսաստանի բանտեր: Անխնա հալածվում էր հայ մտավորականությունը, կողոպտվում հայ գյուղացիությունը:

Ժողովրդի համբերության բաժակը լցվեց, և 1921թ. փետրվարին ապստամբություն սկսվեց բոլշևիկյան իշխանությունների դեմ: Փետրվարի 18-ին ապստամբ ուժերը մտան Երևան: Սիմոն Վրացյանի գլխավորությամբ ստեղծվեց Հայրենիքի փրկության կոմիտե, որը պետք է կառավարեր երկիրը մինչև կառավարության ձևավորումը: Կոմիտեն ժողովրդին ուղղած իր առաջին ուղերձում կոչ էր անում պաշտպանել կարգ ու կանոնը[2]: Հայաստանի տարածքի մի մասի վրա վերականգնվեց անկախությունը, որը տևեց մեկ ու կես ամիս:

Բոլշևիկները խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ ապրիլի 2-ին ներխուժեցին Երևան: Մայրաքաղաքը ավերածությունից փրկելու և ավելորդ արյունահեղությունից խուսափելու հա-մար որոշվեց Երևանը հանձնել առանց մարտի: Հայրենիքի փրկության կոմիտեն, զորքը և մեծ թվով բնակիչներ Գառնի-Դարալազյազ գծով բռնեցին դեպի Ջան-գեզուր տանող ճանապարհը, այնտեղից էլ անցան Պարսկաստան:

Փաստորեն, 1921թ. փետրվարյան ապստամբությունն անհաջողությամբ ավարտվեց: Ապստամբության ունեցած դրական ու բացասական հետևանքներին լայնորեն անդրադարձավ 1920-1930-ական թթ. սկյուռքահայ մամուլը:

Փարիզի «Վէմ» հանդեսում Հայրենիքի փրկության կոմիտեի նախկին նախագահ Սիմոն Վրացյանը, ապստամբության հետևանքներին անդրադարձնալիս, նշում է, որ

* Հոդվածն ընդունվել է 25.12.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՍՀ ապստամբության ամբիոնը:

դրանց մեջ ,առաջին տեղն է բռնում հայ մտաւորականութեան փրկութիւնը կացինահար լինելուց կամ Ռուսաստան արքայութիւնը»[3]: Նույն խնդրի կապակցութեամբ Բոստոնի «Հայրենիք» օրաթերթը, որը պարբերաբար է անդրադարձել այս խնդրին, գրում է. «Հայ ժողովուրդը, եթէ փետրուար 18-ի դիւցազնական ըմբոստացումով չկրցաւ տեւականորեն վերահաստատել ու ապահովել իր ներքին ազատութիւնն ու պետական անկախութիւնը, գէթ յաջողեցաւ օտար կամ օտարին ծառայող հայանուն դահիճներու ձեռքէն խլել ստոյգ մահուան դատապարտուած իր ազատատենչ մտաւորականութիւնն ու զինուորականութիւնը: Ուրիշ խօսքով՝ հայ ժողովուրդը փրկեց իր երէկի դեկավարները վաղուան յաղթանակի համար, որ կը հաւատար եւ կը հավատայ թէ անխուսափելիօրէն պիտի գայ օր մը, քաղաքական անարդար նպաստաւոր պայմաններու մէջ»[4]: «Հայրենիք» օրաթերթի մեկ այլ համարում ևս նշվում է, որ հայ ժողովուրդն իր օրհասական ճիգով կարողացաւ «ոչ միայն արգիլել իր մտաւորականութեան ու զինուորականութեան բնաջնջումը, այլեւ շօշափելիօրէն մեղմել, անարդար տանելի դարձնել կարմիր լուծը»[5]: Թերթի 1930թ. փետրվարի 18-ի խմբագրականը մատնանշում է, որ, ըստ էության, փետրվարյան ապստամբության բարիքներից առաջինը ազատատենչ հայ մտավորականության և զինվորականության փրկությունն էր[6]:

Փետրվարյան ապստամբության շնորհիվ փրկվեց ոչ միայն հայ մտավորականութիւնը, այլև զինվորականութիւնը: Այս կապակցութեամբ «Հայրենիք» ամսագրում Գարեգին Նժդեհը գրում է, որ Սյունիքում մղվող մարտերը հոգեբանորեն նպաստեցին փետրվարյան ապստամբությանը, ինչն էլ իր հերթին «խորհրդային կացնից փրկեց հայ մտավորականութիւնը, սպայութիւնը և խմբապետութիւնը» [7]:

Մտավորականության փրկութեանն է անդարդաբռնում նաև Հայրենիքի փրկութեան կոմիտեի անդամ Իրազեկը (Հակոբ Տեր-Հակոբյան), ով գրում է. «Փետր. 18-ը, դժբախտաբար, չկարողացաւ վերջնականապէս խորտակել բոլշեւիկեան լուծը եւ Հայոց Աշխարհի ազատութիւնն ու անկախութիւնն պարզել, բայց տուեց մէկը միւսից անելի կենսական ու բախտորոշ արդիւնքներ մեր հայրենիքի ու ժողովրդի համար: Փետրուարեան նոյն «հրաշագործ» ցնցումի հետեւանքով՝ Մոսկուան անսպասելիօրէն Հայաստան վերադարձրեց հայկական բանակի արքայական սպաներից մեծ մասին, որոնց համար, անկասկած, բոլորովին այլ ճակատագիր էր սահմանուած» [8]:

Պետք է համաձայնել սփյուռքահայ մամուլի հրապարակումներն, որ փետրվարյան ապստամբության շնորհիվ բանտերում հայտնված բազմաթիվ հայ մտավորականներ ու զինվորականներ փրկվեցին անխուսափելի «կացնահարություններից»: Հայ ժողովրդի ընտրանուն վերահաս մահվանից փրկելու հարցում փետրվարյան ապստամբության դերն աներկբայելի է:

Փետրվարյան ապստամբության դրական հետևանք համարվում է նաև անկախության գաղափարի հաջողված «փորձարկումը»: «Դրօշակ»-ի էջերում Փետրվարյան ապստամբությանը անկախության գաղափարի տեսանկյունից է անդրադարձնում ապստամբության ղեկավարներից Կարո Սասունին: «Փետրուարեան ապստամբութեան խելայեղ թափը, ժողովուրդի անհուն հրճուանքը կարելի է բացատրել անկախ պետութիւն, ազատ հայրենիք (ընդգծումը հեղինակինն է - Խ. Ս.) ունենալու բուռն բաղձանքով: Ազգային անկախութեան աղաղակն էր որ կը պոռթկար փետրուարեան ցնցումներուն մէջ: ... բոլորէն վեր կը խօսէր քաղաքական խոր գիտակցութիւնը – վերականգնել կորսուած անկախութիւնը և հայրենիքը ազատել օտար ու անօգուտ լուծէն», - գրում է Կ. Սասունին[9]: Այս կապակցութեամբ վերջինս մեկ այլ տեղ նշում է. «Փետրուարի 18-ը հայ ժողովրդի վերածնունդի ճանապարհին, հայ ժողովուրդի եւ անոր կազմակերպուած զանուածներու ազգային քաղաքական ապրումներու խտացուած արտայայտու-

թիւնն է: ... Փետրուարեան ապստամբութիւնը ոչ միայն փրկեց 2000-է աւելի մտաւորական եւ գինուորական ուժեր գլխատումէ, այլ փրկեց հայ ժողովուրդը կատարեալ ստրկացումէ մը, վերականգնելով անոր ազգային անկախութեան համոզումը» [10]: Կ. Սասունու կարծիքով, ըստ էութեան, Փետրվարյան ապստամբությունը հայ ժողովրդի անկախության ծագելու դրսևորում էր: «Հայրենիք» ամսագրի էջերում էլ Կարո Սասունին, փետրվարյան սերնդին անվանում է «անկախության սերունդ» [11]:

Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Սիմոն Կրացյանը փետրվարյան ապստամբությունից հետո հանրության ներկայացրած հաշվետվության մեջ ևս անդրադառնում է անկախության խնդրին: Ըստ նրա՝ ապստամբությունը ևս մեկ անգամ փաստեց, որ հայ ժողովուրդը վաղ թե ուշ հասնելու է իր անկախությանը: Բոլշևիկմի տիրապետությունը ժամանակավոր է: «Մենք հաստատ գիտենք, որ բոլշևիկմը Հայաստանում իշխող կը լինի այնքան, որքան ռուս զօրք կայ այնտեղ», - եզրակացնում է Ս. Կրացյանը [12]:

Հ. Իրազեկը կարևորում է այն, որ հայ մտավորականության փրկությունը Հայաստանի անկախության գաղափարը վառ պահելու գրավականներից մեկն էր: «Բոլշևիկները, տիրելով մեր երկրին, այո, ֆիզիքապէս ոչնչացրին Հայաստանի անկախութիւնը՝ գէթ անորոշ ժամանակով, սակայն, չկարողացան հոգեպէս եւս ոչնչացնել, այսինքն՝ մեռցնել անկախութեան գաղափարը, որովհետեւ բնաջնջումից փրկուեցին մեր մտաւորականութիւնն ու ղեկավար տարրերը, որոնք փաստորէն այդ գաղափարի գլխաւոր ջահակիրներն են հանդիսանում», - գրում է Իրազեկը [13]: Նույն գործիչը փետրվարյան ապստամբության հերթական տարեդարձի առիթով նշում է, որ այն (փետրվարյան ապստամբությունը) «հայ ժողովրդի հերոսական ընդվզումի, արդար զայրոյթի եւ իր ազգային իրաւունքների խորունկ գիտակցութեան մի գեղեցիկ յուշարձանն է» [14]:

Այսպիսով՝ ապստամբության անմիջական ղեկավարները, խոսելով ապստամբության հետևանքների մասին, միանշանակ շեշտում են Հայաստանի անկախության գաղափարի արժևորումը: Փետրվարյան ապստամբությունը յուրատեսակ ինդիկատոր էր՝ ստուգելու հայ ժողովրդի վերաբերմունքը դեպի ազատությունն ու անկախությունը: Ապստամբության դրական հետևանքների մեջ այս համոզումն առաջնային կարելի է համարել:

Շարունակելով քննել փետրվարյան ապստամբության իբրև հետևանք անկախության գաղափարի արժևորումը՝ նշենք, որ սիյուրքահայ մամուլում հիմնական խոսք ասողը դաշնակցական թերթերն էին:

Ապստամբության հինգամյակին նվիրված «Դրօշակ»-ի խմբագրականում ասվում է, որ ապստամբությունը մեծ նշանակություն ունեցավ Հայաստանի անկախության գաղափարի ժողովրդականացման և խորացման առումով: Ըստ պարբերականի՝ տարերայնորեն ծնունդ առած շարժումն առաջին իսկ պահից տողոված էր Հայաստանի անկախության վերականգնման գաղափարով: Ավելին՝ ապստամբության արագ բռնկումն ու տարածումը ևս պայմանավորված էր այն հանգամանքով, որ ժողովուրդը ցայտուն և թարմ փաստերով տեսավ «անկախ և խորհրդային Հայաստանների միջև եղած տարբերությունը» [15]:

Այս տեսակետից խմբագրականում ևս մեկ այլ դիտարկում է արվում: Անկախության գաղափարն այնքան էր արմատացել ժողովրդական ամենալայն զագնվածների մեջ, որ հանուն այդ անկախության մոլեգին կռիվ էր մղվում անգամ Ռուսաստանը խորհրդանշող բոլշևիկյան իշխանության դեմ [16]:

«Դրօշակ»-ի մեկ այլ խմբագրական հետևյալ կերպ է անդրադառնում խնդրին. «Եվ հայ գիւղացին ըմբոստացաւ, իր հայրենիքին մէջ, իր տան մէջ, իր մէջքին վրա

զգալով բովանդակ արհաւիրքը նոր լուծին:... Փետրուար 18էն յետոյ էր որ, մարդիկ իրապէս ըմբռնեցին ազատութեան եւ սեփական հայրենիքի արժէքը: Ինչ որ վերացական գաղափար էր կամ բաղձանք, այնուհետեւ դարձաւ թանձրացեալ պատկեր եւ անհրաժեշտութիւն»[17]:

Պարբերականը միաժամանակ փաստում է, որ փետրվարյան ապստամբությունը յուրօրինակ պարտություն էր «Հայաստանի մարգպաններուն, արհեստական յաղթանակի այդ եղկելի ասպետներուն»[18]: Ըստ պարբերականի, փաստորեն, օտար իշխանությունների տեղական դրածոները չէին կարող երկար գոյատևել:

Փետրվարյան ապստամբության հետևանքներին լայնորեն անդրադառնում է նաև Բոստոնի «Հայրենիք» օրաթերթը: Իբրև ապստամբության հետևանք՝ Հայաստանի անկախության գաղափարի վերաթմուրման մասին է խոսվում թերթի 1927թ. փետրվարի 18-ի խմբագրականում: «Ազատ ու անկախ ապրելու իր վեհապետական այլևս անդրդուելի կամքը այսպէս յայտնելէ ետքը, հայ ժողովուրդը մինչեւ այսօր կը շարունակէ ապրիլ եւ ապահուաբար ասկէ ետքն ալ պիտի շարունակէ ապրիլ ազատ ու անկախ հայրենիքի գաղափարով, միշտ պատրաստ մեծագոյն զոհողութիւններ ընելու անոր իրականացման համար, մինչեւ որ միջազգային քաղաքական աւելի նպաստաւոր պայմաններ գան հարթելու այժմ անյաղթելի թուացող արգելքները եւ կարելի դարձնելու հայ ազգային գերագոյն իտէալին յաղթանակը», – գրում է թերթի խմբագիրը[19]: Ըստ թերթի՝ հայ ժողովուրդը սեփական հայրենիքի ազատության ու անկախության արժէքը այնքան չէր զգացել, որքան փետրվարյան ապստամբության օրերին[20]: Թերթի համարներից մեկում համեմատության համար նշում է, որ նույնիսկ «Հայաստանի Հանրապետութեան օրերուն հայ զանգուածը ցոյց տուած չէր այնպիսի ազգային գիտակցութիւն եւ ռազմունակութիւն, որքան Փետրուարեան ապստամբութեան շրջանին»[21]: Թերթը միաժամանակ նշում է, որ ապստամբությունը բարձրացրեց հայ ժողովրդի քաղաքական կշիռը ինչպէս կովկասյան հարևանների, այնպէս էլ թուրքերի և Մոսկվայի մոտ, որովհետև «Փետրուարի ապստամբութիւնը զէնքի փառաւոր քուէարկութիւն մըն էր ի նպաստ Հայաստանի ազատութեան եւ անկախութեան» [22]: Իսկապէս որ փետրվարյան ապստամբությունից հետո, ինչպէս ցույց կտրվի ստորև, հատկապէս խորհրդային կենտրոնական իշխանությունները ավելի զգաստ էին մոտենում Հայաստանի խնդիրներին:

«Հայրենիք» օրաթերթում փետրվարյան ապստամբության հետևանքներին է անդրադառնում նաև սփյուռքահայ մամուլի անխոնջ մշակ Օննիկ Մխիթարյանը: Ըստ նրա՝ ապստամբության շնորհիվ վերահաստատվեց անկախությունը վերականգնելու հայ ժողովրդի ձգտումը, ժողովուրդը հնարավորություն ունեցավ համեմատելու անկախ Հայաստանի օրերը բոլշեւիկյան իշխանության օրերի հետ և համոզվեց, որ անկախությունը «բոլորի համար կը դառնար իբրեւ կենսական անհրաժեշտութիւն, օր, լոյս, հաց...»[23]: Փետրվարյան ապստամբությունը հավատ ներշնչեց սեփական ուժերի նկատմամբ, հոգեբանական առումով վերագնահատվեց բարոյական ուժի ազդեցությունը: Օ. Մխիթարյանը եզրակացնում է, որ «Փետրուարեան ապստամբութիւնը հայ ցեղի հերոսական մէկ սքանչելի ընդվզումն էր ընդդէմ ստրկութեան եւ յանուն ազատ եւ անկախ հայրենիքի» [24]:

Տարագիր հեղինակ Աշոտ Թաթուլը Փարիզի «Հառաջ» օրաթերթում գրում է, որ ապստամբությունը հայ ժողովրդի անսահման զոհաբերություններով և հերոսության բազում դրվագներով հազեցված համերաշխ պայքարի, օտար նվաճողների դիվային ծրագրերը խափանելու գիտակցության արտացոլումն է: Ավարտելով իր խոսքը՝ հեղի-

նակն ամփոփում է. «...Փետրուար 18-ը հայ ժողովուրդի անկախ եւ ազատ ապրելու փոթորկալի մէկ ցոյցն է» [25]:

Կահիրեի «Հուսաբեր» օրաթերթը գրում է, որ «Փետրուար 18-ը դէպի ապագան յոյսով եւ խանդավառութեամբ լեցնող անմոռանալի թուական մըն է» [26]: Աթենքի «Նոր օր»-ը ևս բոլշևիզմի դեմ պայքարին զուգահեռ արժևորում է հայ ժողովրդի ձգտումը «Հայաստանի անկախութեան եւ ազգային պետութեան գաղափարին» [27]:

Այսպիսով՝ 1920-1930-ական թթ. սկիզբը ևս մամուլը, անդրադառնալով փետրվարյան ապստամբության հետևանքներին և դրանցում արժևորելով Հայաստանի անկախության գաղափարը՝ հաստատում է, որ հայ ժողովուրդը երբեք չի հաշտվի ստրկության մեջ մնալու մտքի հետ և հարկ եղած դեպքում պատրաստ է մեկ մարդու նման պայքարելու հանուն հայրենիքի անկախության: Փետրվարյան ապստամբությանը հայ ժողովուրդը մեկ անգամ ևս դրսևորեց ազատ և անկախ ապրելու իր կամքը:

Փետրվարյան ապստամբության դրական հետևանքներից մեկն էլ բոլշևիկյան իշխանությունների՝ ժողովրդի հանդեպ կիրառվող քաղաքական և տնտեսական հալածանքների մեղմացումն էր: Ապստամբությունը թեև պարտությամբ ավարտվեց, սակայն Հայաստանի խորհրդային նոր իշխանությունները, նաև Մոսկվայի ցուցումով, սկսեցին ժողովրդի հանդեպ առավել մեղմ քաղաքականություն կիրառել:

Ս. Կրաջյանն անդրադառնում է Կովկասի կոմունիստներին ուղղված Վլադիմիր Լենինի նամակին, որտեղ բոլշևիկների առաջնորդը մեղմ քաղաքականության կոչ էր անում [28]: Կրաջյանն այսպես է արձագանքում այդ փաստին. «Այս նամակը որքան եւ արդիւնք էր այն ժամանակուան Ռուսաստանի ընդհանուր պայմանների, Անդրկովկասին վերաբերող մասում մեծապէս թելադրուած էր Հայաստանի փետրուարեան ապստամբութեան թողած տպավորութիւնից» [29]: Հենց այս տեսակետից էլ Կրաջյանը բարձր է գնատահում Փետրվարյան ապստամբությունը, նշելով որ այդ շարժման ազդեցությունը փաստացի ավելի մեծ էր, քան Հայաստանի սահմանները [30]:

Սեկնաբանելով ապստամբությունից հետո Հայաստանում բոլշևիկների ավելի մեղմ քաղաքականությանը՝ Կրաջյանը «Վէմ»-ում նշում է, որ որոշակիորեն դա պայմանավորված էր նաև փետրվարյան դեպքերով: Նա համոզված է, որ «եթէ դեկտեմբերից իշխէր արեւի խելացի ու հեռատես քաղաքականութիւն, փետրուարեան ապստամբութիւնը տեղի չէր ունենայ, եւ Հայաստանը ազատ կը մնար մի խոշոր ցնցումից» [31]:

Փարիզի «Հառաջ» թերթի խմբագիր Շավարշ Միսաքյանը հետփետրվարյան բոլշևիկյան քաղաքականության վերաբերյալ գրում է, որ «Ռուսաց աշխարհում» ալ մարդիկ ըմբռնեցին, թէ ինչ կը նշանակէ խաղալ ժողովրդի մը համբերութեան եւ ազատութեան հետ: «... մարդիկ այլեւս չհամարձակեցան վարուիլ այնպէս, ինչպէս փետր. 18էն առաջ» [32]:

Կ. Պոլսի «Ճակատամարտ»-ն էլ իր հերթին արձանագրում է, որ ապստամբությունից հետո խորհրդային իշխանությունները փոխեցին իրենց վերաբերմունքը, տեղի ունեցան պաշտոնանկություններ, նոր եկած պաշտոնյաները ավելի մեղմ քաղաքականություն սկսեցին վարել [33]: Նոր պաշտոնյաներ Հայաստան ուղարկելու փաստն առանձնացնում է նաև Հ. Իրազեկը: Նա փետրվարյան ապստամբությունը յուրահատուկ դաս է համարում Կրեմլի համար, որը ստիպված եղավ ավելի խոհեմ վերաբերմունք ցուցաբերելու «մասնաւորապէս Կովկասի ժողովուրդների եւ Հայաստանի ու հայութեան հանդէպ»: Հ. Իրազեկը բոլշևիկյան մեղմ քաղաքականության ապացույց է համարում Ալ. Միասնիկյանին Հայաստան գործուղելը: Վերջինս, ըստ Հ. Իրազեկի, «համարում էր շրջահայեացներից ու լրջմիտներից մէկը հայ բոլշևիկների շարքերում» [34]: Մոսկվան, միաժամանակ ստիպված եղավ ետ կանչելու Ավիս Նուրիջանյանի նման

չարանենգ պետական և կուսակցական պաշտոնյաներին, որոնք այլևս Հայաստան չվերադարձան[35]:

Բոլշևիկյան քաղաքականության մեղմացման մասին է խոսում նաև «Հայրենիք» ամսագրի հիմնադիր և խմբագիր Ռուբեն Դարբինյանը: Ըստ նրա՝ փետրվարյան ապստամբության արդյունքում ոչ միայն մեղմացան հայաժանգները, այլև ավելի հայրենասեր բոլշևիկ դեկավար հայ գործիչներ եկան Հայաստան: «Եթէ 1921-ի Փետրուարին հայ ժողովուրդը գրեթէ մէկ մարդու պէս ապստամբած չըլլար Սովետական լուծին դէմ, Լենինը ստիպուած չէր ըլլար մեղմ եւ ազգային տեսակէտով անելի թոյլատու քաղաքականութիւն վարել Հայաստանի մէջ՝ անելի չափաւոր եւ անելի ազգայնական բոլշևիկ իշխանաւորներ դրկելով Երեւան՝ յանձին Մեասնիկեաններու եւ Լուկաշիններու», - գրում է Ռ. Դարբինյանը[36]:

Եվ, իրոք, 1921թ. ապրիլի 24-ին Հայիեղկոմի նախագահ Ս. Կասյանը հրամանագիր ստորագրեց ընդհանուր ներման մասին[37]: Լենինի վերոնշյալ մեղմ քաղաքականության կոչին, և դրան հետևած բոլշևիկների քաղաքականության խոհեմացմանն են անդրադառնում նաև «Դրոշակ»-ի[38] և «Հայրենիք»-ի[39] խմբագրականները, Օ. Մխիթարյանը[40]:

Այսպիսով՝ 1921թ. փետրվարյան ապստամբությունը դրական ազդեցություն ունեցավ բոլշևիկյան բռնաճնշումները մեղմելու առումով: Սկյուռքահայ հասարակական քաղաքական միտքն այս մեղմացումը աներկբայելիորեն կապում է նաև փետրվարյան դեպքերի հետ: Հայաստանում բոլշևիկների քաղաքականության վերափոխումը մեծապես պայմանավորված էր Մոսկվայի ցուցումով: Հաշվի առնելով թույլ տրված կոպտագույն սխալները՝ Վ. Լենինը հրահանգեց վերանայել նախկին քայլերը և ժողովուրդների հանդեպ բռնություններ չկիրառել:

Ինչպես իրավագիտորեն նկատում է Աթենքի «Նոր օր» պարբերականը, փետրվարյան ապստամբության հետևանքով հայ բոլշևիկները Հայաստանի ժողովրդին նոր փորձանքների գիրկը չտարան: «Այս թուականի (1921թ. փետրվարի 18 – 19. Ս.) նշանակութունը չեն ժխտեր նաև երբեք հայ պոլշևիքները, որովհետև անոնց համար այլ դարձակէտ մը եղաւ եւ նոր քաղաքականութեան սկիզբ: Հայաստանի ժողովուրդէն կտրուած եւ օտար միջավայրի մէջ ապրած հայ պոլշևիք մտաւորականութիւնը թերեւս մեծ փորձանքներու պիտի առաջնորդէր հայ ժողովուրդը, եթէ չպատահէր փետրուարեան ապստամբութիւնը», - գրում է թերթը[41]:

1920-1930-ական թթ. սկյուռքահայ մամուլը փետրվարյան ապստամբության հետևանք կամ արդյունք համարում է նաև այն, որ ժողովրդի մոտ վերափոխվեց անվերապահ ռուսական կողմնորոշման տեսլականը: Եթե խորհրդայնացման նախօրեին Հայաստանում ռուսական դիրքորոշումը ընդհանուր առումներով որևէ կասկած չէր հարուցում, պապ գործադրված բռնությունների պատճառով առաջ եկած համաժողովրդական ապստամբությունը կտրեց այդ կարծրատիպը:

Ռ. Դարբինյանը «Հայրենիք» ամսագրում հրատարակված իր հայտնի «Հայ քաղաքական մտքի դեգերումները» հոդվածաշարում ընդգծում է հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման դեմ ընդվզումը, որն արտահայտվեց փետրվարյան ապստամբությամբ: «Անկասկած, 1921թ. Փետրուարեան Ապստամբութիւնը նոր էջ մը բացաւ հայ ազգի նորագոյն քաղաքական պատմութեան մէջ: Ատիկա իսկապէս ժողովրդական ըմբոստացում մըն էր Ռուսիոյ եւ ռուսական օրիէնտացիային դէմ, որուն հանդէպ, երկրի մեր զանգուածը յանկարծ լեցուեր էր աննախընթաց ատելութեամբ մը: Իր ազատութեան եւ անկախութեան համար կռուող հայութիւնը տարերային մղումով մը զէնք էր բարձրացուցեր խորհրդային Ռուսիոյ դէմ», - արձանագրում է «Հայրենիք»-ի խմբա-

գիրք[42]: Ըստ Ռ. Դարբինյանի՝ փետրվարյան ապստամբությունը փաստացի եղավ այն դարձակետը, որով հայ ժողովուրդը հիմնական քննարկման առարկա դարձրեց իր քաղաքական կողմնորոշման հարցը: Նա գտնում է, որ հայ ժողովուրդն այլևս հակված չէ մեկ արևելումով, արդեն առաջ են գալիս երկուսը, որոնք տրամագծորեն հակառակ են միմյանց՝ «դեպի Խորհրդային Ռուսիա, կամ՝ ընդդեմ Խորհրդային Ռուսիոյ»[43]:

Սփյուռքահայ մամուլում տարագիր մի շարք հայ գործիչներ ևս փետրվարյան ապստամբության հետևանքների ու արդյունքների մեջ կարևորեցին վերոնշյալ հանգամանքը: Օ. Մխիթարյանը գրում է, որ «Փետրուարեան ապստամբութիւնը կրցաւ ու պիտի կրնայ համոզել... թէ հայ ժողովուրդը ընդդիմադիր է Ռուսաստանին, կ'ատէ բոլշեւիկեան ռէժիմը եւ ոչ միայն կը գիտակցի անկախութեան անհրաժեշտութիւնը, այլեւ կը կռուի անոր վերանուաճման համարհերոսութեան, զոհաբերութեան եւ համերաշխութեան սքանչելի ճիգերով» [44]: Ըստ վտարանդի հայ գործիչ «հիպոթափութեան եւ դառնութեան այդ հոգոյ բռնկումը մաքրեց վերջին հետքերը ռուսական օրիէնտացիա կոչուող խեղդիչ մառախուղին, որ մզլոտած էր մեր քաղաքական միտքը մէկ ամբողջ դար» [45]:

Կ. Սասունին գրում է, որ Հայաստանի խորհրդայնացումով երևաց, որ Ռուսաստանը նույնիսկ զինակցում է Հայաստանի թշնամի թուրքերին և վերջիններին հետ համախորհուրդ փորձ արեց «կոտրել կազմակերպուած հայ աշխատաւորութեան մէջքը, ստրկացնել զայն անշնչացնելու աստիճան»[46]: Ըստ նրա՝ փետրվարյան ապստամբությունը փաստացի հարված էր ուղղված ռուսական «օրիանտալիզմ»-ին[47]:

Բուենոս Այրեսի «Արմենիա» թերթն էլ իր հերթին փետրվարյան ապստամբության շնորհիվ այլ կարևոր ճշմարտություններ է բացահայտում: Հայ ժողովրդի մեջ արմատացել է ազատության և անկախության գաղափարը, օրհասական պահերին հայ ժողովուրդը կարող է միակամ լինել արտաքին և ներքին թշնամիների դեմ, առաջվա նման ուրիշներից չի ակնկալում իր վերջնական ազատագրումը, «կ'ատէ թուրքը եւ ռուսին չի սիրեր: Խաչապաշտ ռուսը, իսլամ թուրքը չկայ անոր համար, այլ կայ քաղաքական թիրք եւ քաղաքական ռուս» [48]:

Սոֆիայի «Ազատ խոսք»-ի կարծիքով՝ փետրվարյան ապստամբությունը ընդվզում էր «ընդդեմ օտար զազիր բռնութեան» իսկ հետագայում խորհրդահայ որոշ դեկավարներ, «Փետրվարյան ապստամբության մտածողությամբ» հաճախ հակադրվելով Մոսկվային, «նահատակուեցան հայ ժողովուրդի ազատ հայրենիքի պահանջողի «մեղադրանքով»[49]: Թերթն առաջին հերթին նկատի ունի Խանջյանին և Սյասնիկյանին:

Այսպիսով՝ փետրվարյան ապստամբություն փաստը անուղակիորեն տեղիք էր տալիս վերանայելու հայ ժողովրդի անվերապահ ռուսական կողմնորոշումը: Ինչպես որ բոլշևիկյան իշխանություն ընդունելով՝ Հայաստանի ժողովուրդը անուղակիորեն ընդունում էր ռուսական դիրքորոշում, այնպես էլ հակաբոլշևիկյան իր ելույթներով ցույց էր տալիս իր ընդվզումը Ռուսաստանի դեմ:

Իբրև փետրվարյան ապստամբության հետևանք՝ սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը դիտարկում է նաև հայ ժողովրդի հոգևոր-բարոյական վերագաղթումը: Փետրվարյան ապստամբության նշանակությունը, ըստ Փարիզի «Հառաջ»-ի, նաև բարոյական էր[50]: Կ. Սասունին գտնում է, որ փետրվարյան ապստամբությունը ստեղծեց անկախության համար մարտնչող մի սերունդ, այդ սերունդը համախմբվում է անկախության և ազգային պետության քաղաքական նպատակի շուրջը[51]: Հատկապես հայ-թուրքական պատերազմում կրած պարտությունից հետո հայ ժողովուրդը ընկճված վիճակում էր: Կ.Սասունու նկարագրմամբ փետրվարյան ապստամբությունը հայ ժողովրդի «ազգային եսի վերականգնումն էր, թրքական պարտու-

թեան վրէժխնդրութիւնն էր, փախուստէ մը յետոյ եղած կորովի հակայարձակումն էր, որ կը փրկէր հայ ժողովրդի մարդկային հպարտութիւնն ու պատիւը» [52]:

Բոստոնի «Հայրենիք» օրաթերթն ընդգծում է, որ թեև ապստամբությունը պարտությամբ ավարտվեց, «անոր ունեցած բարոյական նշանակութիւնը անչափելի է հայ ժողովրդի ինքնագիտակցութեան եւ ազատագրական պայքարի տեսակէտով: ... Իր ազատութեան ու անկախութեան պայքարը շարունակող հայութեան համար անհկա միշտ պիտի մնայ ներշնչումի եւ ոգեւորութեան աղբիւր մը» [53]: Թերթը ցավով է նշում, որ այս իմաստով ապստամբության արժեքը ճիշտ չի ընկալվում [54]:

Փետրվարյան ապստամբության բարոյական նշանակության մասին է խոսում նաև Բոստոնի հնչակյան պաշտոնաթերթ «Պայքար»-ը: Ապստամբության ժամանակ մղված կռիվներն ապացուցեցին խորհրդային իշխանությունների ծախողված բնույթը: «Եթէ խնդրի լուծումը թողնուէր հայ ժողովրդին, Յեղկոմը այլեւս երբեք Հայաստանի երես չէր տեսնի», - եզրահանգում է պարբերականը [55]:

Լյսյախով՝ փետրվարյան ապստամբությունը հայ-թուրքական պատերազմից հետո տիրող համընդհանուր ընկճվածության համապատկերի վրա բարոյական առումով բարձրացրեց հայ ժողովրդի մարտական ոգին: Համաժողովրդական ըմբոստության շնորհիվ վերականգնվեց հավատը սեփական ուժերի նկատմամբ:

Անշուշտ, փետրվարյան ապստամբությունն ունեցավ նաև բացասական հետևանքներ: Նախ այն, որ գինված ընդհարումների արդյունքում կրկին հայի արյուն հեղվեց: Ցավալիորեն այդ արյունը հեղվում էր հենց հայերի ձեռքով: Պատահական չէ, որ «Պայքար»-ի 1929թ. սեպտեմբերի 11-ի խմբագրականը փետրվար 18-ն անվանում է «եղբայրասպան արկածախնդրութիւն» [56]: Հարկ է նշել, որ թերթը արկածախնդրություն որակումը տալիս է Դաշնակցությանը մեղադրելու նպատակով:

Նույն խմբագրականում անդրադարձ է արվում նաև այն խնդրին, թե իբր փետրվարյան ապստամբության պատճառով Մոսկվայի բանակցությունների ընթացքում Կարսը թողնվեց թուրքերին: «... ճիշտ այդ օրերուն Ռուսերու եւ Թուրքերու միջեւ բանակցութիւններ կ'սկսէին Մոսկուայի մէջ, առկախ խնդիրներու կարգադրութեան համար: Հայաստանի խորհրդային կառավարութիւնը ապահոված էր որ Չիչէրին Թուրքերէն ետ առնէ Հայաստանի գրաւեալ մասերէն գոնէ Կարսի գաւառը: Թուրքեր գիտէին ասիկա, չէին կրնար զօրաւոր ընդդիմութիւն մը ցոյց տալ Մոսկուայի, որուն բարեհաճութենէն կախում ունէր իրեն գէնքերուն յաղթանակը Անատոլի մէջ: Ռուսներուն կողմէ այդպիսի պահանջի մը արգիլելու համար մէկ ձամբայ կը մնար միայն, Խորհրդային իշխանութեան տապալումը Հայաստանի մէջ, եւ ասիկա յաջողեցան ընել օգտուելով Վրացեանի թրքասէր հակումներէն եւ դիրախաւատութենէն», - գրում է թերթը [57]: Փետրվարյան ասպտամբության ղեկավարների հասցեին նմանատիպ մեղադրանքներ է հնչեցնում նաև Փարիզի «Երևան» պարբերականը: «Թէ ի՞նչ եղան քաղաքական հետեւանքները դաշնակներու այս արկածախնդրութեան, այդ արդէն ամբողջ ողբերգութիւն մըն է Հայաստանի ճակատագրի տեսակոտէն, որուն համար ոեւէ չքմեղանք չէն կրնար ունենալ», - թերթի էջերում հռետորական հարցադրում է կատարում Գուրգեն Թահմազյանը: Ըստ հողվածագրի՝ Խորհրդային Հայաստանի իշխանությունները Մոսկվայի բանակցություններում լուծելու էին երկրի տարածքային խնդիրները, սակայն փետրվարյան ասպտամբությունը խանգարեց դրան: «Վրացեանները դառնութեան բաժակին մինչեւ վերջին մրուրը քամել տուին հայ բանուրագիւղացիական հայրենիքին», - եզրահանգում է թերթը [58]: Մեկ այլ տեղ «Երևան»-ը նույն մեղադրանքով գրում է. «... 1920 թուի կէսին, հայ տաճկական սահմանը Խորհրդային Ռուսաստանի միջանտութեամբ 1914թ. գշով պիտի անցնէր, շատ լաւ գիտեն, ինրենց ձեռքի գործն է,

որ ինքներն 1920թ. դեկտ. 1-ին այդ սահմանագիծը Ալեքսանդրապոլի դաշնագրով հայ ժողովրդի կոկորդի տակով անցկացնելու համաձայնեցան եւ վերջը, այսօր էլ կրկնենք, որ 1921թ. մարտի սահմանը գծողը Կարո Սասունիի, Վրացեանի «փրկչական» մաու-զէրն եղաւ՝ նրանով որ թուլացրեց Բէկզատեանի դիրքը տաճիկ ներկայացուցիչների առաջ Մոսկուայում» [59]:

Նման տեսակետ, ի դեպ, հայնտել է նաև Փետրվարյան ապստամբությունից հետո Խորհրդային Հայաստանի առաջին ղեկավարներից Ալեքսանդր Մյասնիկյանը: Նրա պնդմամբ Հայաստանի տարածքներն ավելի մեծ կլինեին, «թե չլինեք դաշնակների վերջին ավանտյուրան» [60]: Իրականում Խորհրդային Հայաստանի կառավարությունը որևէ կարողություն չունեք ապահովելու, որ Չիչերինը Թուրքիայից ետ վերցնի Կարսը: Մեր կարծիքով «Պայքար»-ի այս դիտարկումն ավելի շատ պայմանավորված է Ղազնակցությանը քարկոծելու ցանկությամբ: Իսկ ինչ վերաբերում է 1921թ. Մոսկվայի կոնֆերանսին Ս. Վրացյանի հղած հեռագրի պատճառով Կարսը Հայաստանի կազմում չթողնելու խնդրին, ապա Հայաստանի սահմանների հարցը գործնականում լուծված է եղել՝ մինչև Մոսկվայի կոնֆերանսը [61, 62]: (Սիմոն Վրացյանը «Հայրենիք»-ի փրկության կոմիտեի» իշխանության գալուց հետո հեռագիր է հղում Մոսկվա, հայտարարելով, որ Խորհրդային Հայաստանի պատվիրակության ղեկավար Ալեքսանդր Բեկզադյանը իրավունք չունի Մոսկվայի բանագլություններում հանդես գալու Հայաստանի անունից):

Ապստամբության բացասական հետևանքներից էր նաև արտագաղթը: Հնարավոր հետապնդումներից խուսափելու շուրջ 12-13 հազար մարդ լքեց հայրենիքը և անցավ Պարսկաստան[63]: Ըստ Հայրենիքի փրկության կոմիտեի անդամ Վահան Մինախորյանի այդ թիվը կարող էր մեծ լինել: 1921թ. ապրիլի 2-ի Երևանի անկումից հետո ապստամբները և նրանց համախոհների հիմնական մասը Գառնիի, Ղարալազյազի վրայով քաշվեց Սյունիք՝ Պարսկաստան անցնելու: Սակայն շուրջ 5000 մարդ էլ մոտեցել է Մարգարա գյուղին Թուրքիա անցնելու նպատակով[64]: Կ. Պոլսի «Ճակատամարտ»-ը ևս անդրադառնում է պարտությունից հետո գաղթի զանգվածային բնույթին: Գաղթում էին բոլշևիկյան սարսափները նորից չտեսնելու մտավախությունից ելնելով[65]:

Մինչ հանրագումարի բերելը 1920-1930-ական թթ. սփյուռքահայ մամուլում 1921թ. փետրվարյան ապստամբության հետևանքներին տրված գնահատականները, կատարենք ևս մեկ կարևոր դիտարկում:

Փետրվարյան ապստամբության գնահատականներին հիմնականում անդրադարձել է սփյուռքի դաշնակցական մամուլը: Ոչ դաշնակցական մամուլը, ինչպես վերևում հպանցիկ անդրադարձանք, խնդրի վերաբերյալ իր սակավ հրապարակումներում հիմնականում նպատակ է ունեցել քարկոծել դաշնակցությանը: Երբեմն այդ քարկոծումը փետրվարյան ապստամբության քննադատումից անթաքույց վերածվել է սփյուռքում առկա միջկուսակցական հակասությունների ոչ առարկայական մեկնաբանման՝ թերևս վերջնական նպատակ ունենալով հենց դա: Մեր կարծիքով, առանձին ուսումնասիրության նյութ պետք է համարել սփյուռքի ոչ դաշնակցական մամուլի կողմից հայ ժողովրդի պատմության ամենաբնական էջերից մեկի՝ 1921թ. փետրվարյան ապստամբության վերաբերյալ «աղքատիկ» մեկնաբանությունների պատճառները:

Իսկ ինչ վերաբերում է առկա գնահատականներին, ապա, ելնելով դրանցից, կարելի է եզրակացնել.

ա) Փետրվարյան ապստամբության շնորհիվ փրկվեց բանտերում հայտնված հայ մտավորականությունն ու զինվորականությունը: Հայ ժողովրդի փրկված ընտրա-

ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

նին հետազայում մեծապես ծառայեց սփյուռքյան համայնքներում կրթական, մշակութային, քաղաքական կյանքի կազմկերպմանը:

բ) Փետրվարյան ապստամբությունը ազատ ապրելու կամքի արտահայտման յուրահատուկ դրսևորում էր: Հայ ժողովուրդը ևս մեկ անգամ արժևորեց անկախության գաղափարը, հանուն որի նա պատրաստ է մեկ մարդու նման պայքարի ելնելու:

գ) Փետրվարյան ապստամբությունը դրական ազդեցություն ունեցավ բոլշևիկյան բռնաճնշումները մեղմելու առումով: Հատկապես հայ ժողովրդի ըմբոստության դրսևորումից հետո Մոսկվան հրանազեց Հայաստանի բոլշևիկյան ղեկավարությանը վերանայել գործադրվող կործանարար քաղաքականությունը, ավելի խոհեմ լինել ժողովրդի հանդեպ:

դ) Փետրվարյան ապստամբության փաստով հայ ժողովուրդը ցույց տվեց, որ անհրաժեշտության դեպքում կարող է վերանայել իր ռուսական կողմնորոշումը, եթե այն չի բխում իր շահերից: Փետրվարյան հակաբոլշևիկյան ընդվզումը անուղղակիորեն կարելի է ընդունել որպես հակառուսական ընդվզում:

ե) Փետրվարյան ապստամբությունն ունեցավ նաև բարոյական նշանակություն, այն բարձրացրեց նախընթաց հայ-թուրքական պատերազմում պարտված հայ ժողովրդի մարտական ոգին և վերականգնեց հավատը սեփական ուժերի նկատմամբ:

զ) Սփյուռքահայ որոշ թերթերի կարծիքով Փետրվարյան ապստամբությունը բացասաբար անդրադարձավ Խորհրդային Հայաստանի տարածքային խնդիրներին հայանպաստ որոշում տալու վրա: Հիմնականում հակադաշնակցական մամուլի ներկայացուցիչները այն կապում էին Մոսկվայի բանակցություններից Խորհրդային Հայաստանի ներկայացուցչին ետ կանչելու փաստի հետ:

է) Փետրվարյան ապստամբությունը, ցավոք, նաև մարդկային բազմաթիվ զոհերի առիթ հանդիսացավ, հազարավոր մարդիկ արտազաղթեցին

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, «Հայրենիք» (ամսագիր), Բոստոն, 1926թ., հոկտեմբեր, էջ 101-102:
2. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 5, 5 շրջ.:
3. Վրացեան Ս., Փետրուար 18-ից յետոյ (մեր հետագայ քաղաքականութիւնը), «Վէմ», 1938, Զ տարի, թիւ 1, էջ 5:
4. «Հայրենիք», (օրաթերթ), Բոստոն, 1926, 18 փետրուար:
5. «Հայրենիք», 1927, 18 փետրուար:
6. «Հայրենիք», 1930, 18 փետրուար:
7. Նժդեհ Գ., Լեռնահայաստանի գոյամարտը, «Հայրենիք» (ամսագիր), Բոստոն, 1923թ., սեպտեմբեր, էջ 74:
8. Իրազեկ, Փետրուար 18, «Յուշամատեան Հ.Յ.Ղաշնակցութեան (1890-1950)», (կազմ.՝ Ս. Վրացեան), Բոստոն, 1950, տպ. «Հայրենիք»-ե, էջ 326:
9. Սասունի Կ., Հայկական ազատամարտի վերջին դրուագը եւ անկախութեան սերունդը, «Դրօշակ», 1926, N 3, էջ 74:
10. «Հայրենիք», 1926, 18 փետրուար:
11. Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», 1926թ., յունուար, էջ 96:
12. Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 9:
13. Իրազեկ, նշվ. աշխ., էջ 324:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

14. «Հայրենիք», 1931, 18 փետրուար:
15. «Դրօշակ», 1926թ., թիւ 2, էջ 39:
16. Նույն տեղում:
17. «Դրօշակ», 1930թ., թիւ 2, էջ 34:
18. Նույն տեղում:
19. «Հայրենիք», 1927, 18 փետրուար:
20. «Հայրենիք», 1930, 18 փետրուար:
21. «Հայրենիք», 1931, 18 փետրուար:
22. «Հայրենիք», 1930, 18 փետրուար:
23. «Հայրենիք», 1928, 19 փետրուար:
24. Նույն տեղում:
25. «Յառաջ», Փարիզ, 1929, 23 փետրուար:
26. «Յուսաբեր», Գահիրէ, 1924, 21 փետրուար:
27. «Նոր օր», Աթէնք, 1932, 18 փետրուար:
28. Լենին Վ., ԵԼԺ, հ. 43, Եր., 1982, էջ 237-240:
29. Վրացեան Ս, Հայաստանը բուլշևիկյան մուրճի և թրքական սալի միջև, Բոստոն, Հրատ. Հ.Յ.Դ. Ամեր. Կեդր. Կոմիտէի, 1941, էջ 243:
30. Նույն տեղում, 244:
31. Վրացեան Ս., Փետրուար 18-ից յետոյ (մեր հետագայ քաղաքականութիւնը), «Վէմ», 1938, Զ տարի, թիւ 1, էջ 5:
32. «Յառաջ», 1936, 18 փետրուար:
33. «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1921, 25 մայիս:
34. Իրազեկ, նշվ. աշխ., էջ 325:
35. Նույն տեղը:
36. Դարբինեան Ռ. Փետրուարեան ապստամբութեան 50-ամեակին առթիւ (խմբագրական), «Հայրենիք»-ե (ամսագիր), Բոստոն, 1971, թիվ 1, էջ 2:
37. ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, Պրակ II (1921թ. ապրիլի 2 – օգոստոսի 1), էջմիածին, Պետական հրատարակչություն, 1921, էջ 21:
38. «Դրօշակ», 1926, թիւ 2, 39:
39. «Հայրենիք», 1930, 18 փետրուար:
40. «Հայրենիք», 1928, 19 փետրուար:
41. «Նոր օր», 1932, 18 փետրուար:
42. Դարբինեան Ռ., Հայ քաղաքական մտքի դեգերումները, «Հայրենիք» (ամսագիր), 1923թ., հոկտեմբեր, էջ 142:
43. Նույն տեղում, 143:
44. «Հայրենիք», 1928, 19 փետրուար:
45. Նույն տեղում
46. Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 73:
47. Նույն տեղում:
48. «Արմենիա», Պուենոս-Այրէս, 1933, 18 փետրուար:
49. «Ազատ խօսք», Սոֆիա, 1938, 19 փետրուար:
50. «Յառաջ», 1929, 19 փետրուար:
51. Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», 1926թ., յունուար, էջ 74:
52. Նույն տեղում:
53. «Հայրենիք», 1930, 18 փետրուար:

54. Նույն տեղում:
55. Վրացեան, Հայաստանը բոլշևիկյան մուրձի և թրքական սալի միջև, էջ 236-237:
56. «Պայքար», Պոսթըն, 1929, 11 սեպտեմբեր:
57. «Պայքար», 1925, 30 յուլիս:
58. «Երեւան», Փարիզ, 1929, 24 փետրուար:
59. «Երեւան», 1926, 10 յունվար:
60. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Եր., «Գիտություն» 1999, 15 433:
61. Հակոբյան Ա., ՀՍԽՀ 1921թ. ներքաղաքական կյանքի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Եր., ՀՀ ԳԱԱ Պատմ. Ինստ., 2014, էջ 52:
62. Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940թթ., Եր., ՀՀ ԳԱԱ Պատմ. Ինստ., 2006, էջ 92-97:
63. Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 71:
64. Մինախորեան Վ. Ապրիլ 2-ի գաղթը (Երեւան-Թավրիզ), «Հայրենիք» (ամսագիր), 1923թ., դեկտեմբեր, էջ 49:
65. «Ճակատամարտ», 1921, 21 մայիս:

ԱՄՓՈՓՈՒԳԻՐ

1921թ. Փետրվարյան ապստամբության հետևանքները 1920-1930-ական թթ. սփյուռքահայ մամուլի գնահատմամբ Խաչատուր Ստեփանյան

1921թ. փետրվարյան ապստամբության ունեցած դրական ու բացասական հետևանքներին լայնորեն անդրադարձավ 1920-1930-ական թթ. սփյուռքահայ մամուլը: Բազմաթիվ թերթերի (հիմնականում դաշնակցական) գնահատումների համաձայն՝ ապստամբության շնորհիվ առաջնահերթ փրկվեց բանտերում հայտնված հայ մտավորականությունն ու զինվորականությունը: Ապստամբությունը դրական ազդեցություն ունեցավ բոլշևիկյան բռնաճնշումները մեղմելու առումով: Փետրվարյան ապստամբության փաստով հայ ժողովուրդը ցույց տվեց, որ անհրաժեշտության դեպքում կարող է վերանայել իր ռուսական կողմնորոշումը, եթե այն չի բխում իր շահերից: Ապստամբության միջոցով հայ ժողովուրդը ևս մեկ անգամ արժևորեց անկախության գաղափարը, հանուն որի նա պատրաստ է մեկ մարդու նման պայքարի ելնելու:

Սփյուռքահայ որոշ թերթերի կարծիքով՝ Փետրվարյան ապստամբությունը բացասաբար անդրադարձավ Խորհրդային Հայաստանի տարածքային խնդիրներին հայանպաստ որոշում տալու վրա: Փետրվարյան ապստամբությունը ցավոք նաև մարդկային բազմաթիվ զոհերի առիթ հանդիսացավ, հազարավոր մարդիկ արտագաղթեցին:

РЕЗЮМЕ

Последствия февральского восстания 1921 года по оценкам
прессы армянской диаспоры в 1920–1930-х гг.

Хачатур Степанян

Ключевые слова: февральское восстание, пресса армянской диаспоры, “Дрошак” (Флаг), “Арач” (Вперед), “Айреник” (Родина), “Пайкар” (Борьба), “Чакатамарт” (Битва).

Последствия февральского восстания 1921 года широко обсуждались в прессе армянской диаспоры в 1920-1930-х гг. Первое, что выявляется в положительных последствиях восстания, это спасение армянской интеллигенции и военных от большевистских резней в тюрьмах. Одним из положительных результатов февральской революции было смягчение политических и экономических репрессий большевистского правительства по отношению к народу. Важным последствием февральского восстания был успешный "эксперимент" идеи независимости. Восстание было уникальным выражением воли жить свободно. Армянский народ в очередной раз оценил идею независимости, за которую был готов бороться.

Конечно, февральское восстание имело также негативные последствия. В результате вооруженного конфликта снова пролилась армянская кровь. Отрицательным последствием восстания была также широкомасштабная миграция.

SUMMARY

The consequences of the February Rebellion, 1921 by the Press
of the Armenian Diaspora in 1920-1930s

Khachatur Stepanyan

Keywords: February Rebellion, the Press of the Armenian Diaspora, “Droshak” (Flag), “Haraj” (Forwards), “Hayreniq” (Homeland), “Paykar” (Fight), “Chakatamart” (Battle).

The February revolt had a number of consequences that were widely discussed by the Press of the Armenian Diaspora in 1920-1930s.

Among the positive consequences of the rebellion were the salvation of the Armenian intellectuals, as well as servicemen from the Bolshevik massacre in prisons; mitigation of the Bolshevik’s political and economic repression. Among the most important consequences of the February rebellion was the successful "experiment" of the idea of independence. The rebellion was a unique manifestation of will to live in freedom. The Armenian people again praised the idea of independence and were ready to fight for it.

However the February uprising had also negative consequences. There was an armed conflict with the blood of the Armenians spilled again. Migration was also the negative consequence of the revolt.